

Հաստատում եմ՝

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
տնօրեն Ա. Խզմալյան



ԿԱՐԾԻՔ

ՔԻՐՔՈՐ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՀԵՒ ՈՒՋՈՒՆՅԱՆԻ «ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ
ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՄԷՋՔԵՐՈՒՄՆԵՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԻՆ ՄԷՋ
(ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ, ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԱՐԴԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)» Թ.00.05 «ԿՐՈՆԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հին Կտակարանի մարգարեությունների վերլուծությունը Նոր Կտակարանի համատեքստում՝ երբայերեն, հունարեն և հայերեն բնագրերի բաղդատմամբ կարևոր նշանակություն ունի ոչ միայն բնագրագիտության տեսանկյունից, այլև Հին և Նոր Կտակարանների ներածության և մեկնողական գրականության ուսումնասիրության համար: Այս առումով Քիրքոր Ուզունյանի «Մարգարեական մեջքերումները Նոր Կտակարանի համատեքստում» ատենախոսությունը գնահատելի քայլ է և, թերևս, կարևոր փորձ՝ հայ իրականության մեջ վեր հանելու մարգարեական տեղիների կիրառությունը Նոր Կտակարանում, մասնավորապես, Մատթեոսի Ավետարանում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից՝ համակարգչային շարվածքի 164 էջ:

Ներածության մեջ ներկայացվել են թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, օգտագործված սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների տեսությունը, սահմանվել են հետազոտության խնդիրներն ու նպատակները, տրվել թեմայի ժամանակային սահմանները:

Առաջին գլխում՝ «Մարգարեության բնույթը և պատմական հենքը», հեղինակը ներկայացրել է մարգարեության նշանակությունը և մարգարեի գործառույթը՝ որպես

պատմական ներկայում աստվածային անժամանակ ներկայի փոխանցում: Մանրամասն անդրադարձել է յոթ մարգարեների (երկու մեծ և հորս փոքր մարգարեներ), որոնց մարգարեությունները մեջբերված են Մատթեոսի Ավետարանում, ժամանակաշրջանների քննությանը: Եղած ուսումնասիրությունների հիման վրա տրվում է նշված մարգարեությունների պատմական հենքը, և ճշտումներ են արվում մարգարեի մարգարեացման կոնկրետ շրջանի վերաբերյալ: Հաջորդիվ ներկայացվում են մարգարե (*նաբի*) և տեսանող (*րոեհ* և *խոզեհ*) եզրույթները, և քննվում են դրանց գործառության տարբերությունները: Սույն գլխում առանձին քննության են ենթարկվել մարգարեության տեսակներն՝ ըստ հրեա փիլիսոփա, բժիշկ Մոշե Բեն Մայմոնի կամ Մայմոնիդեսի (1138–1204) «Ուղեցույց տարակուսողների համար» աշխատության մեջ հիշվող տասներկու կետերի: Սրան հաջորդում է մարգարեության գործնական տեսակների նկարագրությունը:

Երկրորդ գլխում՝ «Հին Կտակարանի մարգարեությունները Նոր Կտակարանի մեջ», մանրամասն անդրադարձ է կատարվել մարգարեության երկակի կատարմանը, այսինքն՝ հինկտակարանային ժամանակներում և Նոր Կտակարանի պատմական ժամանակում: Մանրամասն անդրադարձ է կատարվում ընտրված յոթ մարգարեների մարգարեությունների արտացոլմանը Նոր Կտակարանի բոլոր գրքերում՝ Ավետարաններից մինչև Հովհաննու Հայտնության գիրքը, տրվում են նաև ուղեկցող բացատրություններ և վերլուծություններ՝ յուրաքանչյուր գրքի պատմական համատեքստում:

Երրորդ գլխում՝ «Մարգարեական ընտրուած որոշ մեջբերումներու վերլուծութիւն», կատարվում է Մատթեոսի Ավետարանում արտացոլված մարգարեական յոթ տեղիների համեմատական վերլուծություն՝ Աստվածաշնչի եբրայերեն և հունարեն լավագույն բնագրերի հենքի վրա՝ հայերեն Աստվածաշնչի Գրիգոր Զոհրաբյանի հրատարակության բնագրի հետ համեմատությամբ: Քննվում է եբրայերեն և հունարեն բնագրերի հեղինակության և փոխլրացման կարևորության հարցն, ապա մանրամասն կերպով ներկայացվում են վերոբերյալ տեղիների իմաստը՝ եբրայերենում, հունարենում և գրաբար բնագրում՝ հայ մեկնողական գրականության (Ներսես Շնորհալու, Հովհաննես Ծործորեցու, Գևորգ Սկևռացու) համապատասխան մեկնություններին անդրադարձով հանդերձ:

Ատենախոսությունն ունի բնագրային լայն հենք, հատկապես գնահատելի է Աստվածաշնչի եբրայերեն, հունարեն, լատիներեն բնագրերի ձեռագրերի և հրատարակված քննական բնագրերի օգտագործումը, ինչը մեծացնում է հետազոտության գիտական նշանակությունը: Հետազոտությունը, հրատարակվելու դեպքում, կարող է ծառայել որպես խիստ շահեկական ուսումնագիտական ձեռնարկ աստվածբանության ուսանողների համար:

Կարևորելով կատարված աշխատանքը՝ նշենք, որ այն զերծ չէ բովանդակային և տեխնիկական բնույթի թերություններից, որոնց վերաբերյալ ստորև ներկայացվում են որոշ դիտողություններ:

1. Հիմք ընդունելով ատենախոսության շարադրանքը՝ առաջին գլխի 1.3.4 «Մարգարեություններու գործնական տեսակները» ենթակետը հարկ էր վերնագրել «Մարգարեություններու գործնական նպատակները»:
2. Շարադրանքի տրամաբանությունից ելնելով՝ երրորդ գլխի վերջին՝ 3.2 ենթագլուխը, որը պարունակում է լոկ մարգարեների ցանկը, կարելի էր տանել «Հավելված» բաժին:
3. Երրորդ գլխում, եբրայերեն և հունարեն բնագրերին զուգահեռ, թեկուզ՝ որոշ դեպքերում, կարելի էր ներկայացնել նաև ասորերեն բնագրի առանձնահատկությունները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ասորերենը կարևոր նշանակություն է ունեցել Աստվածաշնչի հայերեն թարգմանության գործում:
4. Ներածության մեջ, իբրև ատենախոսության մեթոդաբանական հիմք, նշված է հետևյալը. «Ատենախոսությունը շարադրելու ժամանակ առաջնորդուած ենք պատմաբանասիրական քննական եւ համադրական վերլուծութեան, համեմատութեան մեթոդներով՝ առկայ ձեռագրական նիւթի, հրապարակուած սկզբնաղբիւրներու եւ ուսումնասիրութիւններու հետազօտութեան եւ վերլուծման ճանապարհով» (էջ 7), սակայն հայերեն Աստվածաշնչի որևէ ձեռագիր օգտագործված չէ:
5. Ատենախոսության մեջ մարգարեության տեսակները ներկայացվում են ըստ «Մօշէ Բին Մէյմոնի (Մէյմոնիդէս)» հեղինակի «Դալալատ ալ-հարին» աշխատության (էջ 37): Կարծում ենք, շահեկան կլիներ ծանոթագրությամբ ներկայացնել տվյալ

հեղինակին, տալ աշխատության վերնագրի թարգմանությունը, նշել, թե ինչով է կարևոր տվյալ աշխատությունը, և ինչու է այն ընտրվել՝ մարգարեության տեսակները ներկայացնելու համար:

6. Ատենախոսության 72-րդ էջում հեղինակը գրում է. «Սակայն այլք առաջ կը քաշեն այն տեսակետը, թե յունարէնն ու առաւել մեծ հեղինակութիւն ունի, քան երրայերէնը», սակայն ոչ այդ էջում, ոչ հետագա բուն շարադրանքում կամ տողատակում չի հստակեցնում, թե «այլք» ասելով ում նկատի ունի ատենախոսը: Յանկալի կլիներ, որպեսզի նշվեր մի քանի հեղինակ, որոնք հակվում էին այս կարծիքին:
7. Ատենախոսության 17-18 էջերում մեկ ու կես էջի չափով ուղիղ մեջբերում է արվում՝ ինքնահղումով հետևյալ հոդվածին. «Ուզունեան Տ. Քինյ., Իսրայէլ ո՞ր թուականին ելաւ Եգպտոսէն», ԵՊՀ Աստուածաբանական ֆակուլտետի Տարեքիրք, Երևան, 2017, էջ 263-284», ինչը ծավալուն է ատենախոսության չափանիշների համաձայն: Ատենախոսության մեջ օգտագործված ընդհանուր թվով 16 հայերեն հոդվածներից 7-ը (ուղիղ կեսը) հեղինակին են (էջ 128-129): Բուն շարադրանքի ծավալը (120 համակարգչային էջ) թեմայի նյութի լայն ընդգրկման (յոթ մարգարեական գրքերի տեղիները) համեմատ, սեղմ է:
8. Ատենախոսության 21 և 35 էջերում տողատակում նշվում է «Տաճար» ժողովրդային շաբաթաթերթը, սակայն առանց հեղինակի անվան և հոդվածի վերնագրի:
9. Ատենախոսության իրար հաջորդող մի շարք էջերում բացակայում են տողատակերը (օր.՝ 40-45 էջեր): Ատենախոսության մեջ տողատակերում հղումները միօրինակ չեն: Թվային տարբերակներին հղումների դեպքում տողատակերում հաճախ նշվում են միայն հեղինակը և գործի անվանումը, սակայն բաց են թողնվում հրատարակության տեղը, թիվը, էջերը, իսկ 230 տողատակում հղումից բացի որևէ այլ նշում չկա: Թվային տարբերակների ոչ բոլոր հղումների վերջում է դրված դրանց դիտման օրը:
10. Ատենախոսության ընդհանուր հղումների քանակը 235 է, որից 71-ը՝ առաջին գլխում, ինչը սակավ է և անհամաչափ այսպիսի մի աշխատության համար:
11. Ողջունելի է, որ ատենախոսությունը շարադրելիս օգտագործվել են նաև եկեղեցու հայրերի և միջնադարյան հայ մեկնիչների երկերը, սակայն առավել շահեկան

կլիներ, եթե նշվեին այդ մեկնիչների ծննդյան և մահվան թվականները (թեկուզ՝ մոտավոր):

12. Ատենախոսությունը թեև հիմնականում շարադրված է գրագետ, այդուհանդերձ, դրանում տեղ են գտել տեխնիկական բնույթի վրիպակներ:

Ամփոփելով՝ նշենք, որ ասվածով հանդերձ, հետազոտական աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների (կրոնի տեսություն և պատմություն) թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի «15-19-րդ դարերի հայ մատենագրության» բաժնի 2025 թ. հոկտեմբերի 28-ի նիստում:

Նիստին մասնակցել են պ.գ.թ., դոց. Աննա Օհանջանյանը, պ.գ.դ. Իգոր-Դորֆման Լազարևը, պ.գ.թ. Արտակ Մաղալյանը, պ.գ.թ. Փիրուզ Մնացականյանը, պ.գ.թ. Հրանտ Օհանյանը, պ.գ.թ. Նարեկ Հակոբյանը, կրտսեր գիտաշխատող Աստղիկ Հակոբյանը:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
«15-19-րդ դարերի հայ մատենագրության»
բաժնի վարիչ, պ.գ.թ., դոց. Աննա Օհանջանյան

28.10.2025

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
«15-19-րդ դարերի հայ մատենագրության»
բաժնի վարիչ, պ.գ.թ., դոց. Աննա Օհանջանյանի
ստորագրությունը հաստատում եմ՝

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
տնօրենի գիտական գծով տեղակալ, պ.գ.թ. Վահե Թորոսյան

28.10.2025